546. ՏԱՊԱՆԱՔԱՐ, *ընկած է ս. Գրիգոր Լուսավորչի բակում. վրան մեկ լուծ եզներ արոր են քաշում, շուրջը՝*

խաչս մալքում
քամ մալին

ԽԱՉՍ ՄԱԼՔՈՒՄԻՆ, ՔԱՄԱԼԻՆ:

48. ԽԱՉՄԱՍ ԳՅՈՒՂ

Գյուղամիջում կա մի թաղակապ եկեղեցի, վրան փոքր զանգակատուն. կոչվում է ս. Ստեփանոս, համաձայն ներքոգրեալ արձանագրությունների շինել է ուստա Հուսեփը։

547. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ *մուտքի բարավորի վրա, 1 տող.*

թվին ՌՃ: (1651):

Հրատ. Բարխուդարեանց, 100։

548. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ *մուտքի արևելյան կողին.*

Ես ուստա Յուսէփ եւ Գէւուրգ ըսմանա, եկեղեցիս շինեցի յիշատակ. ով որ տեսնոյ, Աստուած ողորմի ասէ:

Հրատ. Բարխուդարեանց, 100։

49. ԴԱՎԱԽԱՆ ԳՅՈՒՂ

Եկեղեցին շինված է 1871 թ., բայց գյուղի հյուսիսային կողմում տարածվում է գերեզմանատունը, ուր կանգնած են փոքրիկ մատուռը և մի քանի խաչքարեր։

549. ԽԱՉՔԱՐԻ *վրա.*

թվին ՋՂԷ: (1548). Ես Շահաւոր կանգնեցի խաչս հայր Պախա, մաւր իմ Շահմաս · · · · :

Հրատ. Բարխուդարեանց, 110։

50. ԳԻՇԻ ԳՅՈՒՂ

Գյուղի եզրին, ձորակի աջ ափին, աղբյուրի մոտ կա մի մատուռ, որը կոչվում է «Ոսկյանց խաչ» և շինված է XIX դարում, բայց մոտի գերեզմանատունն ավելի հին է։

550. ԽԱՉՔԱՐԻ *վրա.*

Այս է տապան Պակնայզարի որդի Աղաբէկ խոխային. ՌՃՀԲ: (1723):

Հրատ. Բարխուդարեանց, 120։

51. ԾՈՎԱՏԵՂ ԳՅՈՒՂ

Գյուղի արևելյան եզրին, բլրի վրա գտնվում է գերեզմանատունը, որի կենտրոնում կառուցվել է Մելիք Փաշայան տոհմի դամբարանատունը։ Հուշարձանների այս վերջին խումբը բաղկացած է եղել երեք իրար կից կիսաղետնափոր մատուռ-դամբարաններից և մի թաղածածկ փոքր եկեղեցուց։ Բոլորի մեջ եղել են մեծ, տափակ և սև քարից շինված գերեզմանաքարեր՝ առանց տապանագրերի, և դրանց գլխին կանգնած նույն քարից խաչքարեր՝ գեղեցիկ քանդակներով ու արձանագրություններով։ Այժմ շենքերի միայն հիմնապատերն են մնացել՝ ներսը լցված քարի և կրաշաղախի բեկորներով։ Մի քանի խաչքարերի վերին մաս-